# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-3 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում 2017թ դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում 2017թ դեկտեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ: | Պայմանագրի փոփոխություն: |
| Փոփոխության նկարագրություն: | Կանխավճարի հանում: |
| Փոփոխության հիմնավորում: | ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-3 *Պայմանագրի 8.5 կետ:* |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1**
**26.12.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան "28" դեկտեմբերի 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վանդիստ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մուրադյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 26.12.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-3 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Չեղյալ համարել պայմանագրի 3.2 կետը:

1.2 Պայմանագրի 3.3 կետը շարադրել նոր խմբագրմամբ .<<3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:>>:

1.3 Հաստատել պայմանագրի Հավելված 1 Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է) :

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | <<Վանդիստ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 | ք. Երևան, Նալբանդյան 13-5 |
| Կենտրոնական Գանձապետարան | <<Ինեկոբանկ>>ՓԲԸ |
| Հ/Հ 900011018109 | Հ/Հ 2050022265091001 |
| ՀՎՀՀ 02565518 | ՀՎՀՀ 02705726 |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հաստատված է
N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-3 գնման պայմանագրի

"28" դեկտեմբերի 2017թ. կնքված
Համաձայնագրով

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 3 | 30237490/301 | Մոնիտոր | | Մոնիտոր ԼԵԴ 20˝, 1920x1080,16.7միլիոն գույն,դիտարկման անկյուն 90 աստիճան(Հ) / 65 աստիճան(ՈՒ),ՎԳԱ մուտքի հնարավորությամբ Երաշխիք 1 տարի | հատ | 49848 | 249240 | 5 | ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 | 5 | Ոչ ուշ քան դեկտեմբերի 29 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011018109
ՀՎՀՀ 02565518

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Վանդիստ>> ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 13-5
<<Ինեկոբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 2050022265091001
ՀՎՀՀ 02705726

/ստորագրություն/